

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

17.07.2015թ.

Գ.ԱՐՏԱՇԱՐ

Արմավիրի մարզի Արտաշար համայնքի ղեկավարի 2015թվականի առաջին կիսամյակի աշխատանքային գործունեության վերաբերյալ

Հաշվետու ժողովին մասնակցում էին ավագանու անդամները, գյուղապետարանի աշխատակիցները, դպրոցի տնօրենը, համայնքի բնակիչները և մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝ Փառանծեմ Կարապետյանը:

Ձեկույցով հանդես եկավ համայնքի ղեկավար Մ.Օհանյանը, որը ներկայացրեց 2015 թվականի առաջին կիսամյակում իր կողմից կատարված աշխատանքները: Նաև նշեմ, որ 2015թվականի առաջին կիսամյակի ընթացքում ավագանին հրավիրել է 5 նիստ, որի ընթացքում քննարկվել են համայնքին հուզող հարցեր, որոնց վերաբերյալ ընդունված որոշումների մասին իրազեկվել է համայնքի բնակչությանը: Գյուղապետարանը ստացել է 24 շրջաբերական, ուղարկել 16 գրություն և քաղաքացիներին է տրամադրել 109 տեղեկանք:

1. Գյուղատնտեսության բնագավառ.

Գարնանը գյուղատնտեսական աշխատանքների մեկնարկի ժամանակ գյուղ է ներկրվել 13 հազար յիստ կադավարության կողմից հատկացված դիզելային վառելանյութ և բաժանվել հողօգտագործողներին, սնուցման աշխատանքները կատարելու համար, նաև գյուղ է ներկրվել 1120 պարկ ազոտական պարատանյութ և բաժանվել ըստ հողօգտագործողների ներկայացրած պահանջարկի:

Ոռոգման ջրով հողօգտագործողներին ապահովելու նպատակով գյուղապետարանը իր անմիջական աջակցություն է ցուցաբերել ՋՕԸ-ին անխափան ոռոգման ջրով հողօգտագործողներին ապահովելու համար, չնայած ոռոգման ջրի սակավության ձեռնարկվում են միջոցներ ոռոգման ջրի խնդիրները մեղմացնելու նպատակով: Կատարվել է հացահատիկի և գարու բերքահավաքը մեկ հա.հողատարածքից մթերվել է 30-ից 35 ցենտներ բերք, նաև կատարվում է բանջարային, բոստանային և այլ մշակաբույսերի բերքահավաք:

2015թվականի առաջին կիսամյակի սեփական եկամուտների հավաքագրումը կազմում է 63.3% շարունակվում են հավաքագրման աշխատանքներ:

2. Կենցաղ սպասարկման բնագավառ.

2015թվականին առաջին կիսամյակում տնտեսությունների կենցաղային պայմանները բարելավելու նպատակով կատարվել է խմելու ջրի անխափան մատակարարում միջինը 12 ժամյա աշխատանքային ռեժիմով, գյուղապետարանի և սանէպիդ կայանի կնքած պայմանագրի համաձայն պարբերաբար խմելու ջուրը ենթարկվել է ստուգումների: Վերակառուցվել է 1 կ/մ փողոցային լուսավորություն և մեկ փողոցներ ունեն լուսավորություն: Կատարվել է ճանապարհների ավագապատում և հարթեցում 15 կ/մ: Կատարվել է աղբահանության աշխատանքներ ամիսը 4 անգամ և համայնքում աղբի կուտակումներ չկան:

Համայնքում գործում է սպորտային խմբակ և գյուղապետարանի աջակցությամբ ապրիլ ամսին մասնակցել են 77 առաջնությանը և մեկ երեխաներ հախթելով գրավել են առաջին տեղը, իսկ օգոստոսի 6-ին վրաստանում մասնակցել են կովկասի առաջնությանը և մրցումներին մասնակցելու համար գյուղապետարանը ցուցաբերելու է իր անմիջական աջակցությունը ,տարվում են աշխատանքներ սպորտը զարգացնելու ուղղությամբ: Գյուղապետարանը սերտ համագործակցում է դպրոցի հետ, կազմակերպում է միջոցառումներ և միջոցառման մասնակից երեխաներին հանձնվում է նվերներ: Կանանց միազգային օրվա կապակցությամբ թոշակառու կանանց և հաշմանդամ կանանց համար կազմակերպվել է տոնական միջոցառում և տոնի կապակցությամբ նրանց հանձնվել է նվերներ: Տարվում է աշխատանքներ մշակույթի և սպորտի զարգացման ուղղությամբ:

4. Սոցիալական բնագավառ.

Գյուղապետարանի անմիջական ուշադրության կենտրոնում են սոցիալապես անապահով ընտանիքները, հաշմանդամները և թոշակառուները: 2015թվականին սոցիալապես անապահով 8 ընտանիք դիմել է դրամական օգնության խնդրանքով և գյուղապետարանը չըմերժելով նրանց խնդրանքը տվել է դրամական օգնություն: Գյուղապետարանի քանքերի շնորհիվ « Դիակոնյա» բարեգործական կազմակերպության կողմից 50 ընտանիք ամսական մեկ փաթեթ ութ կիլոգրամ տարողությամբ սննդամթերք է ստանում,սոցիալապես անապահով 17 ընտանիք ստանում են ընտանեկան նպաստ,տարվում է աշխատանքներ բոլոր ուղղություններով գյուղի սոցիալական վիճակը բարելավելու նպատակով:

5. Համայնքի հիմնախնդիրները

- 1.Խմելաջրի ցանցի նորացում
- 2.Ճանապարհների ասֆալտապատում
- 3.Մշակույթի տան վերանորոգում
- 4.Մանկապարտեզի շենքի կառուցում
- 5.Գյուղապետարանի շենքի կառուցում
- 6.Ոռոգման ցանցի կիսախողովակների կառուցում և խորքային հորերի վերագործարկում:

Արտաշարի գյուղապետարանը 2015 թվականին առաջին կիսամյակում աշխատավարձի,սոց վճարումների և այլ ծառայությունների հետ կապված պարտքեր չունի:

Արտաշար համայնքի բնակիչները գյուղապետ Մ.Օհանյանի գլխավորությամբ իրենց խորին երախտագիտություն են հայտնում Արմավիրի մարզպետ պարոն Ա.Ղահրամանյանին խնդրելով ուշադրություն դարձնել համայնքի հիմնախնդիրներին:

Արտաշար համայնքի
ղեկավար



Մ.Օհանյա

17.ՀՈՒԼԻՍ 2015 ԹՎԱԿԱՆ
ԳՅՈՒՂ ԱՐՏԱՇԱՐ